Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր 01
16. մայիսի 2017թ. կնքված N ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-9 պետական գնման պայմանագրի
Փոփոխություն N 1

*ք. Հրազդան* *,,19, դեկտեմբերի 2017թ.*

<<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանը>>, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Լ.Պետրոսյանի, որը գործում է <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի>> կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<Ոսկանյանշին>> ՍՊԸ**-ն, ի դեմս Ընկերության **տնօրեն Ն.Ոսկանյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 16 մայիսի 2017թ. կնքված N ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-9 պետական գնման պայմանագրի 8.4 կետը և Գնումների գործընթացի կազմակերպման մասին Հայաստանի Հանրապետության 10 փետրվարի 2011 թվականի N168-Ն որոշումը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

Կողմերը որոշեցին.

1.1 16 մայիսի 2017թ. կնքված N ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-9 պետական գնման պայմանագրի հավելված թիվ 2-ը շարադրել սույն համաձայնագրի անբաժանելի մաս կազմող <<հավելված N 1 օրացույցային գրաֆիկ>>-ին համապատասխան:

1.2 Ուժը կորցրած ճանաչել 16 մայիսի 2017թ. կնքված N ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-9 պայմանագրի 1.3-ը և սույն պայմանագրի վերջնաժամկետ սահմանել 16 հունվարի 2018թվականը:

1.3 Կողմերը ֆիքսեցին, որ Ձորաղբյուրի համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքների համար նախատեսված 4857600 (չորս միլիոն ութ հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր) դրամից մինչև 19 դեկտեմբերի 2017թ-ը. որպես կատարողական ներկայացվել է 2450588 (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար հինգ հարյուր ութսունութ) դրամ և համաձայն 16 մայիսի 2017թ. կնքված N ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-9 պետական գնման պայմանագրի 4.6 կետի վճարվել է 2328058 (երկու միլիոն երեք հարյուր քսանութ հազար հիսունութ) դրամ ենթակա է կատարման 2407012 (երկու միլիոն չորս հարյուր յոթ հազար տասներկու) դրամի աշխատանքներ, որից նախատեսվում է կանխավճար 2286661 (երկու միլիոն երկու հարյուր ութսունվեց հազար վեց հարյուր վաթսունմեկ) դրամ:

1.4 2286661 (երկու միլիոն երկու հարյուր ութսունվեց հազար վեց հարյուր վաթսունմեկ) կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժան մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 էջից, կնքվում են հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

***3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| <<ՀՀ Կոտայքի մարզ ք. Հրազդան Կենտրոն վարչական շենք>> | <<Ոսկանյանշին>> ՍՊԸ |
| Հ/Հ <<900001059444>> | ՀՀ Կոտայքի մարզ ք.Եղվարդ Գայի 30 |
| ՀՎՀՀ 03014577 | Հ/Հ 2473700990840000 |
| | <<Արդշինբանկ>> ՓԲԸ Նաիրիի մ/ճ |
| | ՀՎՀՀ 03309315 |
| ------------------------- (ստորագրություն) | ------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված թիվ 1*
*<<16>> մայիսի 2017 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ <<ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02 - 9>> գնման պայմանագրի*
*19 դեկտեմբերի 2017թ N1 փոփոխության*

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

**Չափաբաժին 9**
Ձորաղբյուրի համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքների
**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Ձորաղբյուրի համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքներ | պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | 16.01.2018թ |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
<<ՀՀ Կոտայքի մարզ ք. Հրազդան Կենտրոն վարչական շենք>>
Հ/Հ <<900001059444>>
ՀՎՀՀ 03014577
____________________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
<<Ոսկանյանշին>> ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ ք.Եղվարդ Գայի 30
Հ/Հ 2473700990840000
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Նաիրիի մ/ճ
ՀՎՀՀ 03309315
____________________________
(ստորագրություն)
Կ.Տ